

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1
ՀՀ Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտեի նիստի

03.05.2013թ.

ք.Վանաձոր

Մասնակցում էին՝

- Ա.Նալբանդյանը - Կոմիտեի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետ
- Ա. Դարբինյանը - Կոմիտեի անդամ, ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ
- Լ.Բերոյանը - Կոմիտեի քարտուղար, ներքին աուդիտի բաժնի պետ
- Մ.Սայադյանը - մարզպետարանի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ
- Կ.Երիցյանը, Վ.Սայադյանը, Վ.Պապինյանը - ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետներ
- Ս.Մացակյանը - «Գուգարքի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
- Ա.Սարուխանյանը - «Լեռնապատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
- Ն.Ջուլիակյանը - «Քարաձորի հիմնական դպրոց » ՊՈԱԿ -ի գործադիր տնօրեն
- Լ.Սարգսյանը - «Վանաձորի N 7 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
- Ա.Ներսիսյանը - «Վահագնիի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն
- Հ.Խումարյանը - «Վանաձորի N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն

Օր ա կ ա ր գ ու մ՝

1. «Գուգարքի N 2 հիմնական դպրոց», «Լեռնապատի միջնակարգ դպրոց», «Քարաձորի հիմնական դպրոց», «Վանաձորի N 7 հիմնական դպրոց», «Վահագնիի միջնակարգ դպրոց», «Վանաձորի N 4 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ներում իրականացված ներքին աուդիտի աշխատանքների արդյունքների՝ աուդիտորական հաշվետվությունների և եզրակացությունների քննարկում:

Կոմիտեի նախագահի առաջարկությամբ քվեարկության դրվեց արձանագրված խախտումների և թերությունների վերացման և դրանց հետ կապված տնօրեններին պատասխանատվության ենթարկելու հարցը:

Բաց քվեարկությամբ 2 կողմ, 0 դեմ և 0 ձեռնպահ ձայներով՝
Ո Ր Ո Չ Ե Գ.

1. Աշխատանքում ունեցած լուրջ թերությունների, խախտումների համար առաջարկել ՀՀ Լոռու մարզպետին «Գուգարքի N 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն՝ Ս.Մացակյանի, «Քարաձորի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի գործադիր տնօրեն՝ Ն.Ջուլիակյանի և «Վահագնիի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ»-ի գործադիր տնօրեն՝ Ա.Ներսիսյանի նկատմամբ կիրառել «խիստ նկատողություն» կարգապահական տույժը:
2. Քննարկման մասնակից բոլոր ՊՈԱԿ-ների տնօրեններին գրավոր հանձնարարել սեղմ ժամկետում վերացնել արձանագրված թերությունները և խախտումները: Արդյունքների մասին գրավոր տեղյակ պահել մարզպետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժին:

Արձ. Լ.Բերոյան
Հեռ. /091/ 74-21-11



Ռ. Բաբայան

Ա.ՆԱԼԲԱՆԴՅԱՆ